կեաց զամենայն տունն Յունաց մինչև Երուսաղէմ՝ որ է Հրէաստան:

Փոկաս սկսաւ յամի Տեառն ՇՃԲ. ինքնակալեալ ամս Ը: Յաւուրս սորա առին Պարսիկք զԵրուսաղէմ և բազում աշխարհս 'ի Յունաց. եկն 'ի յԱփրիկոյ Հերակլիոս և սպան զՓոկաս: Յաւուրս սորա կարգեցաւ յիշատակ և տօնն ամենայն սրբոցն Աստուծոյ 'ի Նոյեմբերի մէկին:

Հերակլիոս սկսաւ յամի Տեառն ՇՃԺ. ինքնակալեալ ամս ԻԳ: Յաւուրս սորա Պարսիկք գնացեալ յԵրուսաղէմ այրեցին զամենայն տնօրինական տեղիսն, և զսուրբ Խաչն ընդ Պատրիարքին տարան գերի. և գնացեալ Հերակլ 'ի Պարս, յաղթեաց նոցա և դարձոյց զսուրբ Խաչն յԵրուսաղէմ: Եւ զարդարեալ զինքն՝ ունելով զսուրբ Խաչն 'ի յուսն՝ ելանել կամէր ընդ դուռն Գողգոթային, և փակեցաւ ընդդէմ նորա: Եւ

Հայ մատենագրութեան թուանշային գրադարան